8/21 ՅՈՒՆԻՍ 1904

Ա· ՏԱՐԻ · — Թիւ 51

ՎԵՐԱԾՆՈՒԹԻՒՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Բաժանորդագին 10 Ֆր. տարեկան

Հասցէ՝
Réd. du jour. „VERADZNOUTIOUN“.-Roustchouk
Ред. на в. „ВЕРАДЗНУТЮНЪ“. — Русе

ՍՕՑԻԱԼԻՍՏ-ՆԱՑԻՕՆԱԼԻՍՏՆԵՐ

I.

Նացիօնալիստական ոգին իր խորունկ արմատներն ունի հրապարակում գտնուած մեր ամեն կարգի յեղափոխական կուսակցութիւնների մէջ։ Մինչև իսկ այն խմբերը, որոնք իրանց կարծում են մտաւորապէս ազատագրուած այդ ոգիից և իրանց ներկայացնում են սօցիալիստ, այլ և մինչև իսկ սօցիալ-դէմօկրատ, անմիջապէս կորցնում են իրանց ոտքի տակից ամեն սօցիալ-դէմօկրատական հող, երբ ծագած որ և է խնդիրն ուղղակի կամ կողմնակի կերպով «քերթում է նրանց մորթը». — դրա տակից յանկարծ դուրս է պրծնում նացիօնալիստը։ Քօղարկելու համար իրանց այդ նացիօնալիստական տէնդէնցիան, նրանք սկսում են — գիտակցաբար կամ անգիտակցաբար — յօրինել բանաչբօսիկ տարկութիւններ Ռուսաստանի Սօց.-Դէմ. Բանւորական Կուսակցութեան դէմ։ Ինչպէս յայտնի է վերջինս իրան նպատակ է դրել «միացնել և համախմբել Ռուսաստանում գործող բոլոր սօցիալ-դէմօկրատներին», այսինքն ամեն ազգութիւնների սօցիալ-դէմօկրատներին, ունենալով այն համոզումը, որ սօցիալ-դէմօկրատական գործունէութեան համար, որ «բանւոր դասակարգի շահերի տեսակէտից անհրաժեշտ է կատարել միացում բոլոր ազգութիւնների (Ռուսաստանում) պրօլէտարիատի՝ Ռուսաստանի Սօց.-Դէմ. Բանւորական մի կուսակցութեան մէջ»։ Այդ յայտարարութեան վրայ անմիջապէս բարձրանում է աղաղակ մեր, այսպէս ասած, «սօցիալ-դէմօկրատների» կողմից։ Նրանք չեն ուզում «միացում», այլ միայն «կապեր հաստատել» համա-Ռուսաստանի Սօց.-Դէմ. Կ.-թեան հետ. Նրանք չեն ուզում կազմել մի ճիւղը, մի որոշ մասը, մի ուրոշ կազմակերպութիւնն այդ համա-Ռուսաստանի Կ.-թեան, այլ առառաւելն «կաշխատեն յարաբերութիւնների մէջ մտնել (Կովկասաբնակ) վրացի, ռուս և թաթար ժողովրդների պրօլէտարների հետ... որպէսզի միանան և կազմեն մի ուժեղ Կովկասեա՛ն սօցիալ-դէմօկրատիա»! Նրանք ուզում են, մի խօսքով, լինել ինքնուրոյն, անկախ և առանձին «Սօց.-Դէմ. Բան. Հա՛յ կազմակերպութիւն», *) առ առաւելն միացած այն օտար ազգութիւնների պրօլէտարիատի հետ, որոնք կովկասաբնակ են — «կովկասեա՛ն սօցիալ-դէմօկրատիա»! Այդ խօսքերն ասողը նոյն այդ «կազմակերպութեան» օրգան «Սօցիալիստն» է, որի առաջին համարը վերջերս իր ճառագայթներն է արձակել հայութեան ու Կովկասի վրայ։

Այդ ընթացքն արդէն ըստ ինքեան հակադրութիւն է սօցիալ-դէմօկրատական կազմակերպական սկզբունքներին, որպէս և գաղափարին ու ոգիին, և այդ խմբի այդօրինակ առաջարկութիւնները խիստ խորշոտ ու խուսափողական բնաւորութիւն են կրում մանաւորապէս Ռուսաստանի Ս.-Դ. Բ. Կուսակցութեան նկատմամբ, որ արդէն գտնւում է մի և նոյն սօցիալ-քաղաքական պայմաններում, ինչ որ և հայ սօցիալ-դէմօկրատներն առհասարակ։ Որո՞նք են այդ առաջարկութիւնների հիմքն ու պատճառը։ Այդ հարցին հարկ է մօտենալ մի քանի կողմից և այդ ամէն տեսակէտից էլ ակամայ կը յանգենք այն եզրակացութեան, որ այդ «Սօցիալիստ» թերթն իր «կազմակերպութեամբ» ծնունդ է հայ նացիօնալիստական տէնդէնցիայի և ընդգրկում է այդ տէնդէնցիայի բոլոր հետևութիւնները, պատրաստած լինելով հող՝ իջարկին անցնելու մինչև իսկ սէպարատիզմի, ազգային զատման, պահանջի մթնոլորտը։ Քննենք։

Տեսակէտ առաջին։ Նախ անհասկանալի է, թէ ի՞նչ հարկ կայ յօրինելու մէկ զատ ու առանձին ծրագիր Կովկասի «հայ սօցիալ-դէմ. կազմակերպութիւն» անունով՝ անկախ համայն Ռուսաստանի Ս.-Դ. Կուսակցութեան Ծրագրից, քանի որ այդ կազմակերպութիւնը յայտարարում է, որ «ընդունում է գիտական սօցիալիզմն այնպէս, ինչպէս եւրոպակ. սօցիալ-դէմօկրատական կազմակերպութիւնները», և, հետևաբար, այնպէս, ինչպէս նաև Ռ. Սօց.-Դ. Կուսակցութիւնը։ Այդպիսի դիրքն արդէն ըստ ինքեան բնորոշում է «Սօցիալիստի» խմբի հոգեկան ու մտաւոր աշխարհը։ «Սօցիալիստն» աւելորդ և ապարդիւն ջանք է գործադրում, երբ հրէական «Բունդ»-ի կազմակերպութեան բաժանման խնդիրն առաջ բերելով, կարծես թէ դրանով հայ սօցիալ-դէմօկրատների համար էլ, հարկ է տեսնում լինել բաժան մարմին Ռ. Ս.-Դ. Կ.-թիւնից։ «Բունդը» բաժանւեց — և մեզ թւում է՝ ի վնաս թէ՛ իրա և թէ ընդհանուր սօցիալիստական գործի Ռուսաստանում — «Բունդը» բաժանւեց, ասում ենք, կազմակերպական պրինցիպիական տարաձայնութիւնների պատճառով, իսկ նա չը՛ յօրինեց իրա համար մի նոր ծրագիր, այլ ընդունեց Ռ. Ս.-Դ. Կ.-թեան Ծրագիրը։ Մինչդեռ «Սօցիալիստ» խումբն առաջ է բերում իրա առանձին ծրագիրը, նա չէ՛ ընդունում Ռ. Ս.-Դ. Կ.-թեան Ծրագիրը։ Ինչո՞ւ։ Որովհետև այդ խումբը հէնց իր ծրագրում իրան հիմնում է ազգայնական հողի վրայ, անհանդուրժելի պահանջ զգալով նրա մէջ դնել «այն կէտերը, որոնք պիտի ուղեցոյց լինեն, մանաւանդ ներկայումս, հայ պրօլէտարիատի համար», *) — և այդպիսի մեկնման կէտ ընդունելով, նա իր ծրագիրն էլ կազմում է է այդ «հայ» պրօլէտարիատի «կարիքների և պէտքերի համապատասխան պահանջների» ցուցակութեամբ՝ ըստ «Սօցիալիստի»։ Այդպէսով դուրս է գալիս, որ հայ պրօլէտարիատն ունի Ռուսաստանի բոլոր միւս ազգութիւնների պրօլէտարիատից տարբեր և ինքնայատուկ «կարիքներ ու պէտքեր» և դրանց «համապատասխան պահանջներ», որոնք չեն ներկայանում պահանջներ միւս ցեղերի պրօլէտարիատի, և այնքան համանման չե՛ն իբր թէ, որ «Սօցիալիստի» Ծրագիրն ասում է, թէ «պիտի աշխատէ լսելի՛ անել հայ բանւոր դասակարգի կարիքները հարևան ժողովրդների պրօլէտարական կազմակերպութիւններին և ձգտէ ամբողջ Ռուսաստանի կազմակերպած պրօլէտարիատի գործունէութեան շրջանակի մէջ մտցնել պահանջներ, որոնք կենսական են հայ պրօլէտարիատի համար»։ *) Այդպիսի յայտարարութիւն, որ յայտնւում է «Սօցիալիստի» խմբի Ծրագրի հիմնական բաժինը, ոչինչ չէր կորցնիլ, այլ և ընդհակառակը շատ կը վաստակէր պարզութեան մէջ, եթէ պրօլէտարիատ բառը դուրս ձգէր և և թողնէր միայն հայ բառը։ Դրանով նա կատարեալ ներդաշնակութեան մէջ կը լինէր իր ներքին, այն է նացիօնալիստական, տէնդէնցիայի հետ։ Արդա՛րև, որքան յայտնի է նոյն այն գիտական սօցիալիզմից, որն իբր «ընդունւած» լինի «Սօցիալիստ» թերթի «կազմակերպութեան» կողմից, բոլոր կապիտալիստական երկիրների պրօլէտարիատի դասակարգային շահերն ընդհանուր են, յայտնի է նոյնպէս, որ «փոխանակութեան զարգացումը ստեղծել է այնպիսի սերտ կապ քաղաքակիրթ աշխարհի բոլոր ժողովրդների մէջ, որ պրօլէտարիատի մեծ ազատական շարժումը պէտք է դառնար և վաղուց արդէն դարձել է՝ միջազգային». ապա — որ այս կամ այն երկրի սօցիալ-դէմօկրատները դիմում են այն վերջնական նպատակին, որին դիմում են «բոլոր երկիրների

---

*) Ոչ բաւական տեղեակ ընթերցողին նախազգուշացնում ենք, որ պէտք չէ՛ խառնել այդ կազմակերպութիւնը Կովկասեան Սօց.-Դէմ. Միութիւն անուն կրող կազմակերպութեան հետ. վերջինս արդէն ընդունած է Ռ. Ս.-Դ. Բ. Կուսակցութեան Ծրագիրն ու կազմակերպական կանոնագիրը և միացած է այդ Կ.-թեան հետ։

*) Տես «Սօցիալիստ» Ծրագիրը։

*) Տես «Սօցիալիստ» N-o 1. — Ընդգծերը մերն են։

սօցիալ-դէմօկրատները» եւ որ այդ «վերջնական նպատակը որոշւում է ներկայ հասարակութեան բնաւորութեամբ եւ նրա զարգացման ընթացքով» : *) Այդ գրութեան հիման վրայ, ուրեմն, հայ պրոլետարիատը եւ հայ սօցիալ-դէմօկրատները չեն կարող տարբերուել համաշխարհային պրոլետարիատից ու սօցիալ-դէմօկրատիայից, ուրեմն եւ Ռ. Ս.-Դէմ. Կ.-թիւնից: Դա՝ մէկ:

Յետոյ: Գիտական սօցիալիզմից յայտնի է, որ «միջազգային Սօցիալ-Դէմօկրատիան, դնելով իրան նպատակ՝ ընդունակ դարձնել պրոլետարիատին իրագործելու իր պատմական միսիան, կազմակերպում է նրան իբրեւ ինքնուրոյն քաղաքական կուսակցութիւն՝ հակառակ կանգնած բոլոր բուրժուական կուսակցութիւններին, ղեկավարում է նրա դասակարգային կռւի բոլոր արտայայտութիւնները, մերկացնում է նրա առաջ շահագործողների շահերի անհաշտ հակադրութիւնը շահագործուողների շահերին եւ պարզում է նրան առաջիկայ սոցիալական յեղափոխութեան պատմական նշանակութիւնը եւ անհրաժեշտ պայմանները: Դրա հետ միասին նա երեւան է հանում միացած ամբողջ աշխատաւոր ու շահագործւող մասսայի (գեղջկականութեան) առաջ դրա դրութեան անյուսալիութիւնը՝ կապիտալիստական հասարակութեան մէջ եւ սօցիալական յեղափոխութեան անհրաժեշտութիւնը նրա սեփական ազատագրութեան համար կապիտալի ճնշումից» . . . — Այս երկրորդ գրութեան հիման վրայ էլ, ուրեմն, հայ սօցիալ-դէմօկրատների դերը ո՛չ մի կերպ չէ տարբերւում եւ չէ կարող տարբերուել բոլոր միւս ազգերի սօցիալ-դէմօկրատների դերից, ուրեմն եւ Ռուսաստանի Ս.-Դ. Բ. Կ.-թեան դերից: Մեզ թւում է, որ «Սօցիալիստի» Ծրագիր կազմողներն այդ երկու գրութիւնն էլ պէտք է ըմբռնած լինեն, թէեւ .... այդ ըմբռնումն աւելի ձեւական եւ արտաքին է թւում եւ որոշ համոզմունքի գոյն չէ կրում: Այսպէս, օրինակ, նրա Ծրագրի ամենահիմնական կէտն այդ նկատմամբ գծագրուած է հետեւեալ կերպով. — «Կազմակերպել հայ բանւորներին Կովկասում, ճանաչել նրանց կարիքները, տալ նրանց ձեւը այդ կարիքներին համապատասխան պահանջներ եւ ցոյց տալ այն ուղին, որ հայ պրոլետարիատը պիտի անցնէ, որպէսզի կարողանայ իրագործել իր այդ պահանջները — այս է սօց.-դէմ. բանւորական կազմակերպութեան դերը եւ անհրաժեշտութիւնը»: «Կարիքներ» հայ պրոլետարիատի, «պահանջներ» հայ. պրոլետարիատի, «այն ուղին, որ հայ պրոլետարիատը պիտի անցնէ» եւ ապա դրանո՞ւմ տեսնել հայ սօց.-դէմօկրատի դե՞րն ու անելիքը .... Երկդիմի ու մշուշապատ առաջադրութիւննե՞ր, որոնք չեն կարող ո՛չ մի բացատրութիւն ունենալ համաշխարհային սօցիալ-դէմօկրատիայի վերը բերած գրութիւններում եւ ո՛չ էլ Ռուսաստանի սօցիալ-դէմօկրատիայի տեսակէտից՝ այդ երկրի Սօցիալ-քաղաքական պայմաններում, այլ որոնք ունեն իրանց ներքին իմաստը զուտ հայ ազգայնական, հայ նացիօնալիզմի տեսակէտից:

Այդպիսի հիմնական առաջադրութիւնների վրայ հաստատելով իրանց մեկնման կէտը, «Սօցիալիստի» կազմակերպութեան Ծրագրի կազմողները գնալով աւելի եւ աւելի խրւում են նացիօնալիստական թաւուտ անտառի մթին խորքերը, որտեղից, չը նայելով ամեն տեսակ սօցիալիստական ֆրազաբանութեան, դուրս գալ այլ եւս անկարելի է դառնում:

Մենք դայդ կը տեսնենք յաջորդով:

*) Ինչպէս չակերտների մէջ դրած այդ պարբերութիւնները, նոյնպէս տողեր առաջ բերած հատուածը քաղուած են Ռ. Սօց.-Դ. Բ. Կ.-թեան Ծրագրի հայերէն թարգմանած հրատարակութիւնից:

ՍՕՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԱՅՔԱՐ

(Շարունակութիւն).

Յեղափոխականները սրանց բոլորովին հակառակն են պնդում: Սրանք ձեռք բերած ռէֆօրմները համարում են ամենահասարակ եւ խաբեպէս ո՛չ մի փոփոխութիւն առաջ չը բերող միջոցներ թէ՛ ընդհանրապէս ամբողջ տանջւող մարդկութեան եւ թէ՛ մասնաւորապէս պրոլետարիատի սօցիալ-տնտեսական կեանքի մէջ, սրանց մարդ-անհատական լարուած յարաբերութիւնների մէջ, եւ բացի այն, որ աւելորդ են համարում դրանց ձեռք բերելու համար առանձին ժամանակ եւ ոյժեր վատնելը, այլ եւ գտնում են, որ ռէֆօրմիստները կամ «րեւիզիօնիստները» այդ ուղղութեամբ դասակարգերի գործակցութիւնը, նրանց համաշխատակցութիւնն են պաշտպանում սօցիալիստական կռւի մէջ ընդդէմ բուրժուազիայի, մի բա՛ն, որ սուր-գլխով դէմ է սօցիալիստական կամ դասակարգային կռւի ներքին իմաստին, նրա բուն ոգուն... : Եւ որովհետեւ ռէֆօրմներ ձեռք բերելու համար — ինչպէս որ ռէֆօրմիստներն էլ միջոցներից մէկն են ընտրել — պէտք է բուրժուական հասարակութեան աչքի ընկնող քաղաքական «ազատամիտ» գործիչներին դիմել եւ նրանց աջակցութիւնը խնդրել այդ գործի մէջ, հետեւաբար եւ՛ այդ գործողութիւնը շատ լաւ նմանւում է մուրացկանի ձեռք բաց անելուն, որպէսզի նրա ափի մէջ մի քանի, եւ այն էլ, ժանգոտած, անգործածելի կոպէկներ գնեն՝ անախորժ ձայնը կտրել տալու համար:

Բուրժուազական այս «բարերարութիւնը» մուրալու պատճառով եկած անպատւութեան ծանրութիւնը թօթափելու համար ռէֆօրմիստները, իրանց ասելով, մի շատ լաւ եւ խելացի միջոց են առաջարկում: — Երկրի կառավարական կամ քաղաքական մեխանիզմի մէջ մտցնել սօցիալիստ անդամներ, որպէսզի սրանք, իբրեւ զինուորներ մարքսիզմի, բազմելով մինիստրական կամ այլ այս տեսակ աթոռների վրայ՝ պրոլետարիատի դասակարգային շահերը պաշտպանեն բուրժուազական հողի վրայ հիմնուած քաղաքական կազմակերպութեան օրգանիզացիայի մէջ ստանձնած քաղաքական պարտականութիւնները կատարելու հետ միաժամանակ եւ այն էլ՝ բուրժուա պաշտօնակիցների մէջ... :

Այս քայլը յոյժ այնքան բուռն կերպով է գրաւում նրանց ուշքն ու միտքը, որ նրանք չեն կարողանում տեսնել գաղափարական այն մեծ անկումը մի որ եւ է սօցիալիստ անհատի կամ ընկերոջ, որն ինքն իրան անուանելով մարքսիստ՝ գնում է սակայն կամ ընկերներն են նրան ուղարկում ծառայելու մի այնպիսի հաստատութեան մէջ, որի գոյութիւնը, նպատակը եւ միջոցները զուտ բուրժուազական են, հետեւաբար եւ նա դառնում է բուրժուազիայի ծառայ, թէեւ անուղղակի կերպով, բայց ո՛չ պրոլետարիատի ընկեր, որի գաղափարական պարտականութիւնն է գործել ճիշտ հակառակը բոլոր այն միջոցների, որոնց կատարելու հրահանգը բուրժուազական քաղաքական հաստատութիւնից է դուրս գալիս եւ որոնց գործադրութիւնից ստացուած հետեւանքը նոյն հաստատութեան կամ — որ միեւնոյն է — բուրժուազական շահերի զարգացմանն է նպաստում:

Բայց դեռ աւելին կայ: Բաւական չէ, որ ռէֆօրմիստները պրոպագանդա են անում բուրժուազական հասարակութեան առաջադէմ եւ «ազատամիտ» քաղաքական գործիչների աջակցութեանը դիմել սօցիալիստական գործունէութեան մէջ եւ սօցիալիստ ընկերներին ուղարկել դասակարգային հակաշահ օրգանիզացիայի մէջ ծառայելու, նրանք մինչեւ անգամ, մի առանձին քաղաքականութեամբ, խորհուրդ են տալիս սօցիալիստ աշխարհին, թէ քանի որ պրոլետարիատի — իբրեւ մի առանձին դասակարգի — բուն նպատակն է ազատել կապիտալական շահագործումից միայն, ուրեմն կարող է նա պաշտպանել այնպիսի բուրժուազական կառավարութիւնը կամ նրա մինիստրութիւնը, որը իր վստահութեանն է արժանանում կամ, ուրիշ խօսքերով, «որը պրոլետարիատի շահերի դէմ չի գործում»: Նրանք նոյն իսկ ասում են, «որ պրոլետարական կուսակցութիւնը չը պէտք է կռիւ մղի միապետութեան դէմ, մինչեւ որ սա չը ներկայանայ հակառակորդ պրոլետարիատի պահանջներին»:

Ծայրայեղ միամիտներին է մնում սպասել մի այսպիսի երջանիկ օրի, ժամի, մինչեւ իսկ վայրկեանի, երբ նրանք բախտ կունենան տեսնելու ներկայ բուրժուազական կառավարութիւններից մէկն ու մէկին — ինչպիսի եղանակ էլ ունենայ նա — արժանացած իրանց վստահութեանը, եւ միապետութիւնը՝ ոչ-հակառակորդ պրոլետարիատի պահանջներին . . .

Սակայն ինչո՞ւ համար են այս բոլորը դուրս թափւում ռէֆօրմիստների բերանից: — Միմիա՛յն եւ միմիա՛յն ռէֆօրմներ ձեռք բերելու համար:

Ռէֆօրմները կամ ռէֆօրմներ ձեռք բերելու գործը իբրեւ նպատակ՝ ո՛չ այլ ինչ է ներկայանում պրոլետարիատի համար, եթէ ոչ ցանկութիւն ստանալու համար, «չպրտւող» անարժէք բարիքներ՝ կամ քաղցր, բայց վնասակար դեղահատեր, որոնցով բուրժուազիան եւ նրա գիտակից կամ անգիտակից գործիքները թմրեցնում են սօցիալիստական-յեղափոխական տարրի մէջ նրա էներգիան, նրա կռուելու, պայքարելու պատմական կոչումն ու թափը:

Եւ բուրժուազիան — հենց աւելի այս հասկացողութեամբ ռէֆօրմների մասին — այդ բարիքները բոլորովին անչափ կերպով է չպրտում նրանց, որոնք «ազատ կրիտիկայի» իրաւունք ստանալով են բաւականանում միայն: Նա ո՛չ միայն չպրտում է, այլ եւ երբեմն ինքն է «բարեհաճում» տալ՝ վստահ, որ ռէֆօրմները չեն դասակարգերի մէջ արդիւնաբերութեան աշխատանքի եւ նրա բարիքների սպառման կատարեալ հաւասարութիւն թագաւորեցնողը եւ ոչ էլ այս կամ այն կառավարչական անձի կամ մից ստորագրուած ու պետական կնիքով վաւերացուած թղթի կտորը փոշիի տակ մնալու դատապարտուած, այլ պատրաստի եւ պատրաստւող սօցիալ-տնտեսական ամբողջ ոյժերի ու նրանց գործածութեան համահաւասար եւ իրաւական բաժանումն մարդկային ընկերութեան բոլոր անդամների, բոլոր անհատների մէջ, սակայն ոչ անձնական կամ մասնաւոր, այլ համայնական, հաւաքական սեփականատիրութեան իրաւունքով, ինչ որ այժմ գոյութիւն չունի եւ ինչ որ, իր բացակայութեամբ, աղբիւրն է ամեն տեսակ թշուառութիւնների:

Ահա՛ գործունէութեան այս-

պիսի ուղղութիւնից է հրաժարւում յեղափոխական սօցիալիստների բանակը, որի համոզմամբ րէֆօրմները — ըստ պարագլուխ Լաբրիօլիի — կարող են այնպիսի հասարակական միջավայրի փոփոխութեան դպատճառ, որի մէջ ապրում և շնչում է կապիտալիստական կարգը, սակայն փոխել այդ նոյն կարգը—չինւածքը՝ անկարող են նրանք. Րէֆօրմները, ինչպէս հաստատում է մինչև իսկ «չափաւոր» Ֆէրրին, կարող են միայն մեղմացնել հասարակական չարիքը, իսկ նրա պատճառները վերացնել, արմատապէս ոչնչացնել — ո՛չ երբէք, այնպէս որ մի դասակարգի մենաշնորհը արդիւնաբերութեան և փոխանակութեան միջոցների վրայ՝ րէֆօրմներով անկարելի է ջնջել։

Րէֆօրմների էութեան և նրանց նշանակութեան մասին յեղափոխական սօցիալիստներին ունենալով այսպիսի յայտնի համոզում՝ նրանք չեն թաքցնում նաև այն, որ րէֆօրմիստների պաշտպանած «դասակարգերի գործակցութիւնը» սօցիալիստական աշխատանքների մէջ ինքն իրանից ներկայացնում է բուրժուական մի ճարպիկ մանևրա, որով բուրժուազիան իր օձիքն է ազատում պրօլէտարիատի կոշտացած ձեռքերից։ Բանւորական դասակարգի աճումն ու զարգացումն իբրև սօցիալիստ—յեղափոխական տարր՝ բուրժուազիայի քունն է կտրում, երբ նա մօտիկ ապագայի իր պատկերն է աչքի առաջ բերում — պարտւա՛ծ, ջախջախւա՛ծ բանւորական մուրճի տակ և զրկւա՛ծ իր ներկայ պարազիտային երջանկութիւնից, տնտեսական և հասարակական արտօնած դիրքից...։

Եւ որպէսզի այդ սարսափելի օրը չի գայ կամ թէ քիչ աւելի ուշ գայ՝ բուրժուազիան այժմից իսկ մանևրաների խաղն է շարունակում և ամէնտեսակ միջոցներ գործ դնում պառակտում առաջացնելու կամ նրա սերմը ձգելու սօցիալիստների մէջ, նրա շարքերը քայքայելու և այլն։ Քաղաքական, տնտեսական և «սեփականատիրական» կատաստրօֆն այժմից իսկ դող է ձգել նրա ճարպացած մարմնի մէջ։

Այս բոլորից յետոյ, եթէ առանձին ճիգ գործ դրի րէֆօրմների էութեան մասին լուսաւոր լինելու համար, պէտք է ընդունել, որ նրանք յայտնւում են ոչ աւելի, քան հասարակ միջոցներ, որոնց ձեռք բերելը կարելի է ձգտել՝ յայտնի նպատակին դիմելիս ճանապարհը դիւրացնելու համար միայն, բայց ոչ սօցիալիստական ոյժերի զուր վատնումով։

Այստեղ պէտք է նկատել, որ րէֆօրմները — մինչև անգամ իբրև ողորմութիւնս ընծայող միջոցներ վեր առած նրանց—դրա թէ միշտ էլ անիրագործելի, անկատար են մնում, երբ նրանց գործադրութիւնից սպասող հետևանքը պրօլէտարիատի շահերի օգտին վնաս է ծառայի, մինչդեռ նրանք — այդ րէֆօրմներն իսկոյն և եթ օրէնքի ոյժ են ստանում, երբ բուրժուական դասակարգային շահերը ինկատի առնւած կան։ Եւ այս՝ շնորհիւ այն միակ հանգամանքի, որ րէֆօրմներին կեանք տւող իսկական ոյժը — կապիտալը — ո՛չ թէ պրօլէտարիատի, այլ բուրժուազիայի ձեռքերումն է գտնւում։

Կապիտալը ինքն ամենամեծ և ամենաարմատական իսկական րէֆօրմ է՝ հաստատող կամ ջնջող բոլոր այն րէֆօրմները, որոնք թղթի վրայ գոյութիւն ունեն։ Եւ հէնց այս միակ րէֆօրմից զուրկ է պրօլէտարիատը... Րէֆօրմիստների վերջին խօսքին՝ նրանց յայտնի առարկութեան, թէ յեղափոխական սօցիալիստները իրանց գործունէութեան տակտիկայով դէմ են գնում գիտական սօցիալիզմին, մանաւանդ որ Կարլ Մարքսը — իբր թէ — իր կեանքի վերջերում չէր հաշւում յեղափոխական բանի գործունէութեան մօքի հետ, — Լաբրիօլիստները «կօմմունական կուսակցութեան մանիֆէստով» են հակադրում։

Վ. Աղասեան

(Շարունակելի)

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՐԳԵՐԻՑ

ՋՈՒԼՀԱԿԸ

(Անդրուսօնից)

Անիւ, մեքենայ չարժւում են արագ.
Մակոյկ հինածով ներս-դուրս ելանում.
Աչքունք թելերին յառած են անյագ.
Եռուն բանում են ձեռքերն անդադրում
Բանում են ձեռքեր.քրտինքը՝ կարկուտ,
Սիրտն է բաբախում կրծքում սաստկագին,
Թելերը սողում, սողում են անփոյթ,
Ժխորում գործը եռում մոլեգին։
Այնտեղ, պատից դէն, հեռո՛ւ ու հեռո՛ւ,
Դաշտեր լայնարձակ, անտառ անարկու.
Կանաչ ոստերի հովանու ներքև
Շնչում է կուրծքը ազա՛տ ու թեթև։
Հովն է զլլում անտառի խորքում,
Եւ լուռ է շուրջը, խոզաղ ու զւարթ.
Ծփում է հաճար... Ամպերը չւում
Կապոյտ եթերով լուսափայլ, հպարտ։
— Ազա՛տ, ազատւե՛լ այս խեղդուկ բանտից,
Անքուն հոգսերից եւ աշխատանքից.—
Մեքենան՝ աղմուկ. „երբէ՛ք, ա՛հերբէք“
Այստեղ յաւիտեան բանտ սրկեալ ենք մենք։
Անիւ ոստնում է կատաղի մի պար,
Ջուան վազում ու՛ր ու մու՛ր,
Անիծեալ թելեր էլ չունին դադար.
Մեքենան հեծում ժանտ ու սրտկտոր։
„Անպատւող խոհեր ու դառարկ պատրանք—
Անտառն ու դաշտը—ազատ, լայնարձակ.
Դուք որդիք հիանդ մի ունայնութեան,
Դալուկ ուրուներ առողջ մարդկութեան“
Անպատւող խոհեր ու պատրանք դատարկ
Մ՚ահացնո՜ղ կարիք, խոնաւ ներքնայարկ
Եւ ցուրտ է, եւ սով, խայտառակ աղքատ,
Այս է տանջանքիդ պարգևը հաստատ։
Ո՛չ ծիծաղ, ո՛չ երգ... Ժամանակ առ ժամ
Անոյշ զայրոյթն է այցելում աչքին,
Արցունքն երերում, եւ շրթին տառապամ
Անյետ մահանում անէծքը չնչին։
Եւ սպառնալիքով սեղմւում են... գործում,
Գործում ձեռքերը, գործում անդադար.
Անիծեալ թելեր սողում են, սողում,
Ամէն ինչ փախչում շուրջը միալար։
„Շո՛ւա, շո՛ւա“, քչում է միշտ դազգաններին
Խելառ անիւը չառաչմամբ ուժգին...
Իսկ սրտում այնքան խի՛տ է գիժ ձանձրոյթ,
Այնքա՜ն յամռուգն արցունքն արիւնոտ
Շո՛ւա... ազատութիւն, մարմին չըթակուռ...
Խոնարհ գործում ենք... որ յետոյ խոնարհ,
Թէ Թօշնեն ձեռքեր գործող ու ամուր,
Փարչ մառաններում մեռնենք չարաչար։
Բանում ենք, բանում...Ամպաման փոշին
Տիրում է չորս դին, երերում, լողում
Անիւ, մեքենայ չարժւում մոլեգին,
Անիծեալ թելեր սողում հա՛ սողում։

ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ

(Վոլկենշտեյնից)

Կորացած մէջքեր ու գէմքեր գալուկ,
Տապով բորբոքւում պղինձը եռուն...
Ծնցում է պատեր մեքենան բանուկ,
Դղրդոց, գոչիւն... Սարսափէ՜ անհո՜ւն.
Ամպամած անա թանձր ծուխ ու մուր,
Կուրծք է մառուում —հեղձուցիչ է օդ,
Ա՛խ, մի հեռանալ դաշտերը մաքուր,
Հեռո՜ւ գժոխքից դաժան, վարչանոտ։
Հեռո՛ւ... ուրիններ չարժւում են անդորր,
Եւ արշալոյսից մինչև արշալոյս
Արտերը մեղմիկ ծփում են օրօր,
Ու խոտհարողները երգում սրտայոյզ։

Թարգ. Զրաբերեան

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹՐՔՕ–ՊԱՐՍԿ. ՍԱՀՄԱՆ

1904 մայիս, 11

Մայիսի 1-ին Թրքական սահմանի *** կէտի գայմագամը Վանի կուսակալութիւնից ստանում է հետևեալ հեռագիրը.—«Բիթլիսի կուսակալի հրամանատարութեամբ մեր 18 վաշտ զօրքերը պաշարել են Սասունը. կորուստներ շատ կան. կռիւը ծանր է Գելիգիւզանի մօտերքը»։ Մանրամասնութիւնները ինչպէս քիչ օրից բոլորովին յայտնի կը լինին. յամենայն դէպս՝ դրութիւնը շատ ծանր է Տարօնում։

Վան իբր թէ հանգիստ (?) է. Ամէնալիրը և գաղանաբարոյ Աթամ բէգը ալայ-բէյի է դարձել. տարիներից իվեր հայերի արիւնը խմող փօլիս Հիւսնին՝ թաբուր-աղասի. մի կարգ պաշտօնեաների բացարձակապէս առճիկ չեն տալիս հայերի վրայ ծանրացնելու և կեղեքել տալու յայտնի նպատակով։ Տուրքերը անասելի խստութեամբ հաւաքւում են, որին չկարողանալով դիմանալ՝ Գեաւառի Գարբէլ և Դիզա հայաբնակ գիւղերի հայերը փախան Ուրմի։

Բարզանի շէյխը, որ կռւում էր շէյխ Մահմադ Սադըղի հետ, 12 սպանւած, 17 վիրաւոր և 12 հրացան վրայ տալով պարտւել ու փախել է իր լեռները։

Ուրմիում ձերբակալւեց յայտնի ոճրագործ և վերջերս ամերիկացի միսիօնարին սպանող Սէյիդը։

Ուրմի-Սալմաստ ճանապարհի վրայ ուղտապաններ կռւի բռնելով պարսից ձիաւոր զօրքերի հետ՝ մի քանի սպանութիւններ տեղի են ունեցել. առհասարակ ճանապարհների և գիւղերի դրութիւնը շատ անապահով է։

Օսմանեան պետութիւնը զօրքերով ամրացնում է սահմանի բոլոր կէտերը։ Ասում են թէ կառավարութիւնը և քրդերը սոսկումով սպասում են հայ յեղ. խմբերի ներս խուժելուն։

Ուրմու հայ գիւղացիների դրութիւնն էլ պակաս անմխիթար չէ։ Այս մի քանի թշւառները մնացել են բոլորովին անտէրանտիրական։ Աղա-կալւածատէրերի դարնանային բէգարի, խարճի և այլնի հետ վրայ հասաւ Թաւրիզի առաջնորդական նիրակը՝ հաւաքելու առաջնորդապատկան հասոյթները։ Առաջնորդական տեղապահը զարմանալի և գովելի գութ ու սէր ունի դէպի իր հօտը, այնպէս որ չէր մոռացել իր նւիրակին մի բաց նամակով յանձնարարել Ուրմու հայ գիւղերից ցաf–դեղ հաւաքել առաջնորդարանի համար...

Գիւղացիք իր բազմաթիւ հալստահարող ստորագասեալներով, Սարփարաստը իր անկուշտ փարրաշներով, առաջնորդը իր կաշառակեր, սրբավաճառ, անբարոյական ու խաչագող տէրտէրներով և վերջապէս իր տաք-դեղ ուտելու անկուշտ ախորժակով վեր են ընկել խեղճ հայ գիւղացու վզին...

Ասօ

ՆԱՄԱԿ ՀԱՅՐԵՆԻՔԷՆ

22 մայիս 1904

Սըվազի կուսակալութեան մէջ Թ... անունով գիւղ մը կայ, որուն բնակիչներուն 3/4-ը հայ, իսկ 1/4-ը տաճիկ են։ Անոնց արհեստը ընդհանրապէս ջուլհակութիւն է։ Գիւղին մէջ կայ միւտիր մը, 7 հայ ոստիկան և մէկ բօլիս։

Իրիկուն մը երբ այդ միւտիրը նստած էր սրճարանի մը մէջ և իր բարեկամներով կը կոնծէր, մէկէն հրաման բրաւ որ բօլիսը կանչեն։ Գային կանչելու։ Կէս ժամ վերջը մէյ մըն ալ դուռը բացուեցաւ և ի՞նչ տեսնենք. բօլիսը հայ երիտասարդ մը հըրմշտկելէն ներս կուգար։ Այս տեսարանին վրայ մեծը շուարած ոտքի ելաւ և պատճառը հարցուց։ Բօլիսը ըսաւ թէ՝ այս կենաւորը քիչ մնաց որ փողոցին մէջ զիս

կոխկրտէր. Ես ալ բարկանալով ինծ եղած անարգանքին համար՝ թեւէն բռնելով հոս բերի որ պատժէք։ Խեղճը այս միջոցին ճեպ ճերմակ կտրած կեցած էր չհամարձակելով նստիլ։ Դիւրին էր հասկնալը թէ բոլիսի պատմածը յերիւրանք մըն էր։ Անհամբեր երբ վախճանին կըսպասէինք յուզուած, միւսիւրը յանկարծ երկու ապտակ իջեցուց երիտասարդին՝ անգամ մըն ալ այդպէս բան չընես ըսելով։ Իտես այս տաճկական արդարադատութեան, որ յաճախ գործ կը դրուի վայրագ պաշտօնեաներու կողմէ, մեր սիրտը նետով մը խոցուեցաւ կարծես. բայց... ակամայ համբերեցինք գալիք վտանգները գուշակելով։ Հետեւեալ օրը երիտասարդէն տեղեկացանք թէ՝ ինքը բոլիսին յորդանք մը ըրած ըլլալու համար հրամցուցեր է որ առաջ ան մտնէ ներս, բայց բոլիսը մերժելով թոյլ տուեր է որ երիտասարդը անցնի եւ նոյն պահուն հրելով խեղճը՝ անմիջապէս այդ զրպարտութիւնը յօրիներ է։

Ի՞նչ ըսել. մէկ կողմէն բռնապետ կառավարութեան տմարդի պաշտօնեաներուն գործ դրած վայրագ միջոցները եւ միւս կողմէն խեղճ հասարակութեան ողբալի տխրութիւնը դեռ շա՜տ ապօրինի եւ անօրինակ անցքեր պիտի պարզեն մեր աչքին։ Քանի դեռ ժողովուրդը ինքնագիտակցութեան չէ եկած եւ չըզգար իր արդար իրաւունքները ձեռք բերելու միջոցներու մասին նոյնիսկ խորհիլը, բռնակալ կառավարութիւնն ալ օգտուելով այդ առիթէն՝ գործ պիտի դնէ բոլոր հակամարդկային միջոցները, խեղդելու համար ամէն բողոքի ձայն, թումբ կանգնելու համար առաջդիմական բոլոր հոսանքներուն ու շարժումներուն, որոնք նոյն բաղձալի ազատութեան, նոյն ազատ ու ապահով ապրելու ձգտումին, մէկ խօսքով, քաղաքական ու տնտեսական լիակատար ազատութեան իտէալին կառաջնորդուին։ Եւ ասոր համար, անհրաժեշտ է որ մաքուր ու գիտակից առաջնորդներ, յեղափոխական գաղափարի անկաշառ քարոզիչներ մուտ գտնեն ժողովուրդի բոլոր խաւերուն, մանաւանդ այն կենսունակ դասակարգին մէջ, որ ազատութեան սուրբ խորանին առջեւ իր անձը զոհելու սիրայօժար պատրաստակամութիւնը ցոյց տուած է ու կուտայ ալ՝ երբ առիթը ներկայանայ։ Արդէն այդ ստորին՝ բայց է՛ն բարձր դասակարգը, այդ թշուառ՝ բայց ամէն ինչ իր աշխատութեամբ, իր ճակտի քրտինքով արդիւնաբերող դասակարգն է, որ պէտքը կըզգայ ազատութեան, ծարաւի է անոր։ Հետեւաբար, յոգնած այդ դասակարգի, այդ աշխատաւոր մեծամասնութեան, շարժի՜նք...

X.

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԷՆ

Պօսթըն, 22 մայիս, 1904

Ռուս միապետական կառավարութեան պարտութիւններու լուրը, այստեղ ալ, հայ գաղութի կողմէ ուրախութեամբ կողջունուի։ Ծայրագոյն Արեւելքի ողբերգական արդի դրութիւնը, որ հետզհետէ սրտաճմլիկ տեսարաններ կը պարզէ՝ բախտագուրկ ու երիտասարդ կեանքեր զոհ տալով պատերազմ կոչուած ամենակուլ ճիւաղին, — իսկապէս մխիթարական երեւոյթ մը պարզելէ հեռի է եւ անշուշտ չի տար յաղթութեան խաբուսիկ հաճոյքը, երբ մանաւանդ մտաբերենք որ այդ չքացած կեանքերու, միլիոնաւոր այդ անմեղ զոհերու երեսէն՝ բազմաթիւ ընտանիքներ վերջին ծայր թշուառութեան պիտի մատնուին, մէկ խօսքով, երկրի ազգաբնակութիւնը տնտեսապէս ճգնաժամային րոպէներ պիտի ունենայ՝ գոհացնելու համար կառավարութեան այն պահանջները, որոնք ուղղակի եւ անուղղակի տուրքերու անունին տակ իր վզին պիտի ծանրանան։

Սակայն ցարի անգութ կառավարութիւնը պատմական այս արիւնալի էջը բանալով՝ միւս կողմէն ալ իր հիւանդ մարմնի քայքայումը կը փութացնէ իր իսկ ձեռքով։ Ուշ կամ կանուխ, երկիրը տնտեսապէս քայքայուած, ցարիզմի անկումը անխուսափելի պիտի դառնայ՝ մանաւանդ շնորհիւ այն հանգամանքին, որ ներքին յեղափոխական կրակը պիտի բռնկի եւ հիմնայատակ ընէ ցարերու այն կիսախարխուլ շէնքը, որ ամբողջ երկրի մը ընդհանուր ազգաբնակութեան մեծ թշնամին եւ մակաբոյծն է դարձած։ Առ այժմ պէտք է խորտակել այդ հրէշը՝ իր կարգին դիւրութեամբ ջախջախելու համար նոյնպէս կապիտալիզմը, որ մարդկութեան թշնամին է։

Պատերազմի յաղթութիւններու լուրերը ո՛չ մէկ տեսակէտով կրնան ուրախացուցիչ հանգամանք մը կրել, քանի որ միշտ եւ միշտ օգտուողը — թէ՛ յաղթութեան եւ թէ՛ պարտութեան պարագային — կապիտալիստները պիտի ըլլան։

Նայինք մեր շուրջը, ամերիկաբնակ բանուոր եղբայրներ, մենք ալ ունինք մեր թշնամին՝ կապիտալիզմը, որուն դէմ եթէ ոչ այսօր՝ գէթ վա՛ղը, պատրաստ պիտի ըլլանք կռիւ մղելու՝ պաշտպանելու համար մեր դասակարգային շահերը, մեր արդար իրաւունքները...

Բանուոր

ՄԻՋԱԶԳԱՅՆՈՒԹԻՒՆԸ

„Ամեն երկիրների պրօլետարներ, միացէ՛ք։

—

Սխալ է կարծել որ միջազգայնութիւնը յատուկ է միայն բանուոր դասակարգին։ Իւրաքանչիւր պատմական դասակարգ ուրիշ երկիրներու իր նման դասակարգերու օգնութեան դիմած է, որքան որ այս բանը իր տիրապետութեան շահուն նպաստաւոր եղած է։ Այս տեսակ միջազգային դասակարգային համերաշխութեան օրինակներ առատ են ներկայի եւ անցեալին մէջ։ Եւ սակայն, ինչպէս պիտի տեսնենք, բանուորական միջազգային համերաշխութիւնը կամ այլապէս բանուորական միջազգային համագործակցութիւնը իր լիակատարութեամբ եւ իր պատմական նշանակութեամբ կը գերազանցէ ուրիշ դասակարգային միջազգային համագործակցութիւնները։ Այս ճշմարտութիւնը մեզի աւելի դիւրըմբռնելի պիտի ըլլայ, երբ համեմատութեան դնենք բուրժուազական միջազգային համագործակցութիւնը բանուորականին հետ։ Ամէն բանէ առաջ բուրժուազիայի համերաշխութիւնը յետադիմական է իր հիմունքով, եւ իր նպատակով հակառակ՝ բանուորական համաձայնութեան յեղափոխական նկարագրին։ Պարզենք։ Երբ կը խօսիմ բուրժուազական միջազգայնականութեան յետադիմական բնաւորութեան մասին, ես ի նկատի ունիմ ո՛չ միայն զանազան ոստիկանական միջազգային համաձայնութիւնները, — ինչպէս օրինակ անիշխանականներու դէմ ուղղուած յայտնի համաձայնութիւնը, — այլ եւ զանազան խաղաղասիրական եւ արտաքին երեւոյթով յառաջդիմական միջազգային դաշնագիրները, քօնվէնցիաները եւ քօնկրէսները, որոնք երբ աւելի մօտէն քննուին, երեւան կուգայ իրենց պահպանողական բնաւորութիւնը։ Խնդիրը հոն է որ, բուրժուազիայի ստեղծող, կառուցանող գործունէութիւնը որոշ սահմաններէ անդին չանցնիր։ Դասակարգային շահերն են, որ կը գծեն այս սահմանները, եւ որովհետեւ մասնաւոր սեփականութեան գոյութիւնը եւ պահպանումը սկզբունքը եւ նպատակն է ներկայ կապիտալիստական հասարակութեան, հետեւաբար բուրժուազիայի ամբողջ գործունէութիւնը նոյն նըպատակին կը ձգտի։

Եւ ասոր տրամաբանական հետեւանքը այն է որ բուրժուազիայի ազգայնականութիւնը աւելի զօրաւոր է անոր միջազգայնականութենէն։ Այս վերջինը բուրժուազիայի համար այնքան նշանակութիւն ունի, որքան որ ան համաձայն է անոր ազգային քաղաքականութեան, որ բուրժուազիայի գլխաւոր գործունէութիւնը կընդգրկէ։ Եւ արդարեւ ի՞նչ կը ներկայացնէ արդի ազգայնական պետութիւնը առանձին թերիթօրիայի իմաստով քննուած։ Ան ուրիշ բան չէ, բայց եթէ աշխատանքի գործիքներու մասնաւոր սեփականատիրութեան աւելի լայն եւ աւելի ընդհանուր ձեւը։ Քաղաքացիական եւ քաղաքական առանձնաշնորհումներու ամբողջութիւնը, որոնցմէ իրապէս կօգտուի երկրի մը կապիտալիստական դասակարգը, պատմականապէս կապուած է որոշ թերիթօրիայի մը հետ։ Այս թերիթօրիայի տիրապետութիւնը բուրժուազական դասակարգին համար ամենազօրաւոր երաշխիքն է նաեւ անոր տնտեսական եւ քաղաքական տիրապետութեան բանուոր դասակարգին վրայ։ Եթէ այս թերիթօրիան աւելի զօրաւոր պետութեան իշխանութեան տակ անցնի, այս վերջինին բուրժուազիան ձեռք կանցունէ նաեւ նուաճուած երկրի բուրժուազիայի իրական առանձնաշնորհումներու մէկ մասը։ Այնպէս որ, ինչպէս միենոյն երկրի զանազան սեփականատէրերը իրարու հետ կը մրցին եւ կը կռուին իրար գերազանցելու համար, այնպէս ալ զանազան երկիրներու բուրժուազական դասակարգերը, որոնց շնորհիւ երկար պատմական զարգացումով կազմակերպուած են ազգայնական խումբերով, իրարու հետ կը կռուին ազգայնականապէս իրար գերազանցելու։ Բուրժուազիայի միջազգային յարաբերութիւնները կենթարկուին մրցումի այն օրէնքին, որու վրայ կը յենուին անոր ներքին դասակարգային յարաբերութիւնները։ Ինչպէս որ ներքին ազգային մրցումը շատ պարագաներու մէջ չարգիլեր կապիտալիստներուն իրարու հետ միանալու յանուն զանազան գործնական նպատակներու, այնպէս ալ զանազան երկիրներու բուրժուազիայի միջազգային համերաշխութիւնը։ Մենք արդէն նըկատեցինք որ այդ համերաշխութիւնը երեւան կուգայ դաշնագիրներու, քօնկրէններու եւ միջազգային համաձայնութիւններու մէջ։ Բայց ամենէն գլխաւորը, որ պէտք չէ երբեք մոռնանք, ան է որ միջազգային բուրժուական համագործակցութիւնը կը դադրի հոն, ուր սկիզբ կառնէ առանձին ազգայնական շահը, ինչպէս ալ այս վերջինը կը դադրի առանձին կապիտալիստի շահուն առջեւ։ Մասնաւոր սեփականութեան գոյութիւնը կարգիլէ որ առանձին կապիտալիստներու շահերը, առանց միացորդի, ձուլուին ընդհանուր շահու մը մէջ։

(Работ. дѣло) Д-ръ Кр· Раковски

(Շարունակելի)

Отговорникъ: Степанъ Г. Степанянъ

Търг. печат. и лит. Меркуръ—Русе.